ոչ թէ 10 ձայն, այլ 10 անգամ 4 ձայն, ուրեմն 40 ձայն։ Իսկ միւս անունը, որին գրել են մի ձայնի իրաւունք ունեցող 21 մարդ, ստանում է 21 ձայն։

Վերջապէս ընտրողութեան ժամանակ ես կարող եմ շատ արժանաւոր անունները մոռանալ, բայց այդ անունները կարող են առաջարկել միւս անձինք և երբ նոքա նշանակված կը լինեն քուէարկական տուփերի վրա, գուցէ ես իմ գրած անունին սև քուէ տամ, իսկ ուրիշի գրածին սպիտակ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Հատերին յայտնի կը լինի այն իրողութիւնը, որ վերջին ժամանակներս նկատվում է մեծ ձգտումն թէ սահմանակից և թէ մանաւանդ մեր կովկասեան հայ-երիտասարդների կողմից դէպ ի Գերմանիոյ համալսարանները։ Նոյն իսկ Ղեբսխանան ուսումնարանի հոգաբարձութիւնը, որին յանձնուեցաւ հանգուցեալ Լէֆէնանցի կտակած գումարը, ուզարկել է և ուղարկելու է միշտ որոշեալ թիւով աշակերտներ դէպի Օքսֆորդիոյ կամ Գերմանիոյ համալսարանները։ Այս իրողութիւնը, կամ լաւ ևս ասել զոհաբերութիւնը հայ-ծնողների կամ երիտասարդների կողմից, որոնք շատ դէպքում զոհում են իւրեանց նիւթական ապահովութիւնը ճշմարիտ կրթութեանը անտարակոյս պիտի ուրախալի երևոյթ համարուի մեզ համար և սիրով մեզ որքան կարելի է հարթել նորա ճանապարհն, որ շատ կրկնում են այդպիսի երջանիկ բացառութիւնները։

Չվկայուր անցարարութիւններից միւնը, որ կարող է պատճառել այդ դէպքում, անհարկած լինելու է և այն, որ երիտասարդները շատ անգամ դնում են այնտեղ բոլորովին անծանօթ լինելով լեզուին, որ յայտնի բան է մեծ արգելք լսողց է լինել նոցա համար։

Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը, համաձայնվում ենք այսպիսի միտք առաջարկել։ օգտակար չէր լինի արդեօք և. Ղեբսխանան գիմնազիայի մէջ մտցնել և այդ լեզուի դասաւանութիւնը։

Միւս կողմից պէտք է աչքի առաջ ունենալ և այն հանգամանքը, որ եթէ մեր լեզուն երբ և իցէ պէտք դառնոյ կատարեալ անօթ լուսաորութեան, եթէ երբ և իցէ պէտք է յայտնուի նորանով գրուած դասագրքեր և այլ թարգմանութիւններ, ամենից յարմար միջոցը անտարակոյս գերմանական լեզուն կարող է լինել։ Գիտութեան զանազան ճիւղերը արդէն շատ դարեր է, որ յառաջ են գնացել այն մեծ ազգերի մէջ, յայտնուել են արդէն հարիւրաւոր առարկաների ու երևոյթների անուններ, որոնցից զուրկ է մեր լեզուն։ Ուստի և ֆրանսիական լեզուները ունեն ընդունակութիւն ամբողջապէս ընդունելու դիւրանտի տերմինները։ Իսկ հայոց լեզուն որ չունի այդ ընդունակութիւնը, ստիպուած է նոր առարկաների կամ երևոյթների համար նոր անուններ ստեղծել բայց այդ անունները, նա կարող է պատրաստ գտնել գերմանական գրականութեան մէջ, որ նոյնպէս սիրում է նորանոր առարկաներին նոցա յատկութիւնից առնուած բայց իւր մայրենի բառերով արտայայտած անուններ տալ, օգուտ քաղելով իւր բարդ բառեր կազմելու յարմարութիւնից, որ յատկանիշ է և մեր լեզու։ Այդ աղգակցութիւնը երկու լեզուների կաղմակերպութեան մէջ շատ օգտակար կարող էր լինել ապագայ թարգմանութիւնների համար, որոնք մեծ մասը անտարակոյս Ղեբսխանան գպրոցի աշակերտների ձեռքով պիտի լինի։

Այս մոռանանք նոյնպէս և այն հանգամանքը, որ մենք յիշել ենք արդէն մի անգամ „Մշակի" անցեալ տարուայ համարներում, որ գերմանական լեզուն ֆրանսիերէնի հետ միասին, կարող է ճանապարհ բանալ գպրոցի ուսումնարանների համար դէպի այն փոքրաթիւ ազատական արհեստները, որոնք կան մեր երկրում։

Ն. Լ.

ՆԱՄԱԿ ՑԽԻՆՈՒԱԼԻՑ

„Կովկաս" լրագրի 39-երորդ համարում 1873 թ. ապրիլ 1-ին կարդացի պարոն Փ. Նատիէվի յօդուածը, որ խօսում է Ցխինուալու ուսումնարանի մասին։

Պարոնը ասում է թէ «6 տարի առաջ ժողով կազմուեցաւ Հայոց մէջ, որ ուսումնարան բանան, և իւրաքանչիւր մարդը ժողով կազմողներից ընծայեց երեսուն ռուբլի և այդ գումարը հասաւ մօտ 2 հազար ռուբլիի, որի չորս ծառայում է ուսումնարանին. 240 ռ. Հայոց և Ռուսաց լեզուի ուսուցչին, 120 ռ. վրացւոց լեզուի ուսուցչին, դասատան վարձը 20 ռուբլի մի տարի, պիտոյքների համար 20 ռ. բոլորը 400 ռ.» պ. Փ. Նատիէվը ամբողջապէս 400 ռ. համարում է Ցխինուալ Հայ ժողովրդոց ընծայած փողի չափը։ Բայց ես կասեմ որ 130 ռ. 400 ռուբլից տալիս է եկեղեցին տարեկան ծախսուած մոմերի օգուտից չքաւոր Հայ աշակերտաց համար։

Պարոն Նատիէվը գրում է թէ «պրակտիկայից յայտնի է որ Ցխինուալի ուսումնարանից դուրս եկած աշակերտները, որ անցուցել է 5—6 տարի այնտեղ ոչ Ռուսերէն և ոչ Հայերէն մի հատուած չեն կարողանում հասկանալ և պատմել»։

Արդեօք մի անձն, որ մի լեզուի վրա ոչ մի տեղեկութիւն չունի, կարող է դատել այն լեզուն։ Այնպէս պ. Փ. Նատիէվը դատում է Հայոց լեզուի վրա թէ «Ցխինուալում չկայ այնպիսի աշակերտ, որ կարողանար մեկ հատուած ուղիղ ասել Հայոց լեզուից» բայց ես մօտ քսան աշակերտ դուրս կը բերեմ որ կարդայ Հայերէն աչխարհաբար գիրք և պատմէ կարդացածը իւր բարերով։ Պարոն Նատիէվը գրում է թէ երեք լեզու են սովրացնում Ռուսերէն Հայերէն, և Վրացերէն ու խորհուրդ է տալիս Ցխինուալեցւոց թէ «աւելի լաւ կլի 3 լեզուի տեղ սովրացնէին մի լեզու»։ Դարձեալ խորհուրդ է տալիս, որ Ցխինուալեցիք լաւ կանեն, որ բռնեն այնպէս վարժապետ որ սարատած լինի Աղէքսանդրեան վարժապետական ուսումնարանում (въ Александровскомъ Учительскомъ Институтѣ) և նորան տան 550 *) մանեթից ոչ պակաս, սենեակը և տաքացնելու փայտ կամ թէ չէ Ցխինուալեցիք պահեն մեկ ստիպենդիատ վերոյիշեալ ուսումնարանում, և դաս տան Ցխինուալի ուսումնարանում Ռուսաց լեզուով, իսկ կրօնը տեղական Հայ քահանան»։

Ես խորհուրդ կտայի Ցխինուալեցւոց, որ սովրացնէին մայրենի լեզու կամ տեղական, որ աւելի հասկանալի է մանուկներին, որ նրանք զարգանային այդ երկու լեզուների մէջ, որ ինչ է զարգանալով ապագայում օգուտ քաղէին նորանից. և յետոյ առաւել հեշտ կլինէր սովրեցնել տերութիւնական լեզուն։ Եւ ոչ թէ այնպէս ինչպէս նոր մանկավարժը ասում է։

Բարսեղ Տէր Աբրահամեանց

Պարոն Խմբագիր

«Կովկաս» լրագրի մէջ ես կարդացի պ. Բագաչովի յօդուածը, որի մէջ նա հերքում է այն լուրը, իբրև թէ արուեստագործական ուսումնարանում չէր լինելու այլազաւան կրօնի դասատուութիւնը իսկ տեղական լեզուների արտաքսման վերաբերութեամբ ասում է որ բոլոր հայ-մանուկները չեն խօսում այլապէս, եթէ ոչ վրացերէն լեզուով։ Դատողութիւնը էլի առանձնական բան է. Նորան կարելի այս կողմն էլ ձգել այն կողմն էլ, բայց ես զարմանում եմ, թէ ինչպէս կարելի է ազաւաղել բուն իրողութիւնը, որից հիմնվում է մի կարգ եզրակացութիւնները։ Ես, հարևանցի ծանօթ լինելով այն բանակռուին, որ եղաւ այդ հարցի առիթով Թիֆլիզի գիւղական լրագրութեան մէջ չեմ քննում նորա յօդուածի մանրամասնութիւնները։ Օրինակի համար ես չեմ խօսում այն հանգամանքի մասին, թէ էլ ինչ առանձին գումար է պահանջում քաղաքի տեղական լեզուների դասատուութեան համար, երբ հիմնուելու ուսումնարանի բոլոր գումարը համարեա քաղաքին է պատկանում. ես միայն կամենում եմ յայտնել որ նորա յայտնած իրողութիւնը հայերի մասին սխալ է։ Ամբողջ հալլարարում, որտեղ կենում է մեր խեղճ արհեստաւորների մեծ մասը, տիրապետող լեզուն հայերէնն է. կան գարձեալ մի քանի ամբողջ թաղեր, ուր համարեա միմիայն հայերէն են խօսում։ Բացի դորանից Թիֆլիզումը կան շատ օտար մանուկներ, եկած Հայաստանի գիւղերից ու քաղաքներից, ուր վրաց լեզուի հօտն էլ չկա։ Իսկ ինչ որ կը վերաբերի ռուսերէն լեզուին, կարող ենք հաւատացնել պ. Բագաչովին, որ մեր ստորին դասի մանուկներից հազիւ թէ հարիւրից հինգը ծանօթ լինի այդ լեզուին։ Ճշմարիտ է, հայ-ընտանիքների մէջ կան այնպիսիքը, ուր մանուկները միմիայն վրացերէն կամ ռուսերէն են խօսում, բայց այդ ըստ մեծի մասին բարձր դասումն է, որ կարողութիւն ունի վրացի կամ ռուս դայեակներ պահելու։ Իսկ մենք կարծում ենք որ արուեստագործական ուսումնարանը այդ դասի համար չէ հիմնուելու։ Ն.

ՆԱՄԱԿ ԲԱԴՈՒԻՑ

1872 թուականի Մշակի 19 №-ում արդէն յայտնի է, որ տեղս կազմուել էր «Բարեգործական» անունով ընկերութիւն, որի նպատակն է օժանդակել Բագու գտանվող թէ տեղացի և թէ օտարական աղքատներին։ Այդ գործի կառավարութեան համար ընտրուել էին մի տարի ժամանակաւ հինգ հոգաբարձուք—Արժ. Թադէոս Ալազ Քահանայն և հետևեալ պարոնայքը—Գ. Դիլտարեանց որ և գանձապետ, Գ. Այվազեանց, Ա. Մելիքեանց և Բ. Սարգսեանց.

Ընկերութեան առաջին տարվայ շրջանը լրացած լինելով ապրիլի 1-ին Հոգաբարձութիւնը հրաւիրական թղթով հրաւիրում է Բագու գտնուած բոլոր թէ մշտապէս և թէ ժամանակ նուիրատու անձանց ի հաշուատեսութիւն։ Նոյն օրը եկեղեցւոյ մէջ յիշեալ աւագ քահանայն, որ և հոգաբարձութեան նախագահ է, յայտնեց Հայ հասարակութեան իւր և հոգաբարձուների կողմից չնորհակալութիւն, որ չեն խնայել իրանց կամաւոր նուէրքը աղքատների օգտի համար։ Ի վերջոյ և յայտնեց, որ ինչպէս յայտնուած էր Հոգաբարձութենից, երեկոյեան 6 ժամին ժողովվին յիշեալ ընկերութեան գանձապետ պ. Դ. Դիլտարեանցի տուն, ուր տարեկան ընդհանուր հաշիւ տեսնելու։

Բաւական և երեսի անձինք հաւաքվեցան յիշեալ տեղում։ Կարդացվեցան ընդհանուր հաշիները, և բաժանվեցան իւրաքանչիւրին առանձին թերթերի վերա տպագրուած։ Մի տարվա ընթացքում Հոգաբարձուք գտել էին թէ մշտապէս և թէ միանուագ 102 նուիրատու անձինք, որոնցից

ընծայաբերութիւն եղած է. . . .	941 ռ. 50 կ.

Առանձին արդիւնաբերութիւն Հոգաբարձուաց

Խնդրանքք Հոգաբարձուաց գիմնազիայի Հայ ուսանողները պ. Ամիրաղեանցի աւագնորդութեամբը թատրոն ներկայացրին 72 թ. յուն. 19-ին, ծախսն միջից հանելով զուտ օգուտ մնաց	104 ռ. 28 կ.
Թատրոնի ծախսի մէջ հաշուած էր 10 ռ. — — բայց նորա անդամները ընծայեցին յօգուտ աղքատաց այդ դրամը . .	10 ռ. — —
Մի տարվա ընթացքում պատրաստ գումարի տոկոս ստացված է զանազան ժամանակում. . . .	57 ռ. 25 կ.
Գումարն է	1113 ռ. 3 կ.

Յիշեալ գումարից բաժանուած է մի տարվայ ընթացքում

1. Պարսկաստանից սովի պատճառաւ Բագու պատահած աղքատներին հացի և ճանապարհ ծախսի համար.	132 ռ, 44 կ.
2. Բագուաքնակ աղքատաց ալիւր և փող.	132 ռ. 90 կ.
3. Շամախեցի գետնաշարժի պատճառաւ Բագու փոխադրուած աղքատաց ալիւր և փող . . .	177 ռ. 47 կ.
4. Ղարաբաղցի Բագու բնակվող կամ անցաւոր աղքատաց. . .	85 ռ. 28 կ.
5. Ղարսեցի Յովսէփ Սանասարեանցին ճանապարհածախս. . . .	15 ռ. »
6, Սպահանցի Աղաման Կիրակոսեանին Արքունի հիւանդանոցում 41 օրվա համար բժշկելու վարձ	16 ռ. 40 կ.
7. Երևանցի, Նախիջևանցի, Նուխեցի, Դերբենդցի և Ղզլարեցի Բագու պատահած անցաւոր աղքատաց	48 ռ. 15 կ.

*) Ինչ որ տալիս են այն էլ հեշտութեամբ չեն կարողանում տալ։

մէջ զգայվում է երբեմն պարզ, երբեմն հերոսական ոգեորութեան յատկութիւններ։ Սինը այդ երգերի կորներից, որ իբրև ներքոյ, փառաբանում է դիւցազն Վանագնի ծնունդը, ճշմարիտ մեծ ուչիմասիրութիւն է, թէ մտքերի վսեմութեան և թէ նոցա համաձայնութեան կողմից, նորա ձեր, խօսքերի գեղեցկութիւնը, նրբութիւնը և վայելչութիւնը, տալիս են մեզ բաւականին տեղեկութիւն, թէ որպէս առաջ քան հինգերորդ դարը սկսուեցան գրականական կեանքի փորձերը Հայաստանում։ Քրիստոնէութեան յայտնուելէն յետոյ, այդ երգերը անխղճմտարար հալածվեցան, որովհետև նորա յիշեցնում էին հին կռապաշտական ժամանակները։ Ամէն ինչ որ միտք էր բերում առաջին հաւատքը, ոչնչացրին։ Հների ամէն գործերը կրակով և բոցով անհետացրին։—Աւետարանի առաջին առաքեալները Հայաստանում էին Ասորոց տեղայները, որք եկած էին Օսրոէնի մայրաքաղաքից (?) բայց նոցա քարոզները ունեցան թոյլ արձականգ,—նոքա կարողացան կազմել միայն նորադարձներից մի քանի առանձին համայնքներ, որք չունէին միմեանց հետ որ և իցէ կապ։ Ագաթանգեղի անյաջողութիւնը պէտք է վերաբերել սեմիտական Ասորոց ոգւոյ անհարմարութեանը Հայոց հանճարի հետ, որք էին բնաւորութեամբ արիականներ, և բացի սորանից հայերը այնքան յայտնի կերպով իւրեանց բարբառով տարբերվում էին քարոզիչների լեզուից, որք կամենում էին նորանց բերել դէպի քրիստոնէութիւն։ Միայն փոքր ինչ յետոյ, Տրդատ երկրորդի (?) թագաւորութեան ժամանակ, և Դիոկլէտիանոսի թագաւորութեան վերջերումը, քրիստոնէական կրօնքը տարածուեցաւ բոլոր Հայաստանում, մտաւ ամբոխի մէջ և կանգնեցաւ ազգային եկեղեցի։ Քրիստոնէութիւնը բարոյապէս նորոգելով նորանց, փոխեց նոցա քաղաքական և պօլիտիկական կեանքը, մտցնելով նոցա մէջ նոր մտաւորական պիտոյքներ, նորա հետ տուեց նա և զարկ գրականութեանը։ Այժմ, քրիստոնէութիւնը ներս տարան Յոյները Հայաստանում Կապադովկիայից. նա մուտք գործեց մի դրացի երկրից, դէպի որը դրաւեց Հայերին բնական համազգացութիւնը։ Հայերի և Յոյների մէջ որպէս ազգեր, որ պատկանում էին արիացիների, կամ հնդկա-եւրոպացիների մի և նոյն տոհմին, կար բնածին համամտութիւն։ Բացի դորանից, նոցա մէջ կար այն յայտնի միութիւնը, որով բացադրվում է հայոց գրաւումը դէպի հելլենացւոց քրիստոնէութիւնը և վերջինների խորին ազդեցութիւնը նոցա վերա։ Հայերը, եռանդուն կերպով հրապուրելով իւրեանց հոգևոր դաստիարակների (յոյների) գրականութիւնով, մեծ ջանքով սկսան ուսանել նորան և հետևել նորա օրինակներին, որով նոքա հիացած էին։ Հայերը ծանօթացան արհեստի հետ, որը յայտնի չէր արևմտեան գրօղներին, այսինքն մշակելով միտքը՝ տալ նորան խիստ պաշաճաւոր, ազնիւ եգեղեցիկ արտայայտութիւններ։ Բացի դորանից նոքա թարգմանեցին այն գրքերը յունական աչխատութիւններից, որոնք ներդաշնակութիւն ունէին իւրեանց զգացմունքների և պիտոյքների հետ,—և այդպիսեաւ ըստանձնեցին նոցա պատմաբանները, հին փիլիսոփայները և եկեղեցւոյ հայրերը։ Մեք Հայերին ենք պարտական, որ իւրեանց գրչագրների միջոցով պահպանեցին հների շատ աչխատութիւնները, որոնց իսկականները այժմ կորած են։ Ոչ սակաւ թանգագին է մեզ համար գտանել այդ շարադրութիւնները, որք ողջ մնացին ժամանակի կորստէն, կամ աւելի ոչնչայնող ներգործութիւնից մարդկային ձեռքի, հայերէն թարգմանութեանց մէջ, որ եղել են մեծ մասամբ հինգերորդ դարումը, որոց գրչագրները պահպանուած են եղել աղաւաղութենից, որ արտագրողները խառնում էին նոցա մէջ դարերի ընթացքում։ Համեմատութիւնը այդ թարգմանութեանց իսկականների հետ, որք եղել են նոցա աղբիւրը, կարող է տալ կրիտիկային կատարեալ գաղութիւն վերականգնել բնագրի ճշմարտութիւնը և ուղղել նորան ժամանակով եղած վրիպակներից։ Օրինակի համար, եթէ համեմատենք երկու կամ երեք օրինակ տպագրուած գիրքը մի և նոյն յոյն հեղինակի, անտարագոյս այն հրատարակութիւնը կարող է ունենալ գերազանցութիւն, որը մատաւորապէս համապատասխանում է հայերէն թարգմանութեանը։—Եւ այդպէս, մեք տեսանք, որ հայոց գրականութեան յիշատակարանները յայտնվում են տասնուհինգերորդ դարումը, այսինքն, գտնեա հինգ դար առաջ, քան մուսուլմանների գրականութեան զարգանալը։ Նոքա չարունակվում են միջին դարերի բոլոր ընթացքում և համարեա հասնում են մինչև մեր ժամանակը, ձեակերպելով մի ոսկի շղթայ, որ միաւորում է հին արևելեան աչխարհը նորի հետ։ Վերին Ասիայի պատմութեան համար, ամբողջ ութն դարերի ընթացքում զկնի Քրիստոսի ծննդեան, հայոց գրականութեան յիշատակարանները են միակ առաջնորդներ, որոնց մեք ունենք որպէս այն ժամանակի եղական վկայականներ, ուր կարելի է տեղեկութիւն գտնել։ Հայոց մատենագրները, ծնուելով քրիստոնէական հասարակութեան մէջ, շրջապատուած լինելով ազգերից, որք անձնատուր էին կռապաշտութեան և